ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Լեհաստանի Հանրապետություն ս.թ. մայիսի 7-9-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   - Լեհաստանում ՀՀ դեսպանություն, Լեհաստանի հայ համայնք

5. **Գործուղման նպատակը՝**
   - Մասնակցություն Լեհաստանի հայերի երկրորդ համաժողովին,
   - Հանդիպումներ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ՝ սերտացնելու համայնքային կառույցների հետ կապերը, տեղայնացնելու Սփյուռքի նախարարության ծրագրերը,
   - Այցելություններ դպրոցներ, մշակութային կենտրոններ, եկեղեցիներ:

6. **Քննարկման թեմաները՝**
   - Հայաստանի Հանրապետության հզորացում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հայության ջանքերի մեկտեղում,
   - ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ընդլայնում,
   - Սիրիական ճգնաժամի արդյունքում առաջացած փախստականների ներկա իրավիճակին բոլոր ուղղություններով օգնության կազմակերպում,
   - Լեհաստանում համահայկական մարմնի ստեղծման քննարկում:

7. **Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ՝

- Լեհաստանի Հանրապետության խորհրդարանի վերին պալատի՝ Սենատի նախագահ Ստանիսլավ Կարչևսկու հետ,
- Լեհաստանի Հանրապետության ներքին գործերի և վարչարարության փոխնախարար Սեբաստիան Խվալեկի հետ,
- Լեհաստանի Հանրապետության Սենատի անդամ Յան Մարիա Յակովսկու հետ,
- Լեհաստանի Հանրապետության կառավարության Ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցիչ Էդվարդ Միեր-Ենդժեյովիչի հետ:
- Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Լեհահայոց հոգևոր հովիվ Տաճատ Վարդապետ Ծատուրյանի հետ,
- Լեհահայոց մշակութային ժառանգության հիմնադրամի նախագահ Յան Աբգարովիչի հետ,
- «Ջուլիայի սկյուռիկներ» բարեգործական կազմակերպության ղեկավար Ջուլիետա Գևորգովայի հետ,
- Լեհ-հայկական հիմնադրամի նախագահ Արսեն Հովսեփյանի հետ:

Ելույթներ՝

- Վարշավայի Գյուղատնտեսության ազգային գրադարանի մեծ դահլիճում՝ Լեհաստանի հայերի երկրորդ համաժողովի բացման արարողության ժամանակ,
- Նույն տեղում զեկուցում Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման և պետական քաղաքականության մասին,
- Լեհաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը՝ աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ,
- Վարշավայի կենտրոնում գտնվող Թագավորական ամրոց-թանգարանում՝ «Թերեզա Սահակյան» հիմնադրամին պատկանող գորգերի հավաքածուի մշտական ցուցադրության սրահ այցելության ժամանակ,

- Անհայտ Զինվորի խորհրդանշական Մայր հանդիսացող ազգությամբ հայ Յադվիգա Զառուգևիչովային հարգանքի տուրք մատուցելու նպատակով Վարշավայի Զինվորական Պանթեոն այցելության ժամանակ,
- Արարատ Ղուկասյանի «Փնտրտուքների ճանապարհին» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսի ժամանակ,
- Լեհահայոց մշակութային ժառանգության հիմնադրամի գրասենյակում՝ հիմնադրամի անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Լեհ-հայկական հիմնադրամի գրասենյակում՝ հիմնադրամի անդամների հետ հանդիպման ժամանակ,
- «Ջուլիայի սկյուռիկներ» բարեգործական կազմակերպության գրասենյակում՝ կազմակերպության անդամների հետ հանդիպման ժամանակ:

Բարձրացված հարցեր՝

- Յուրաքանչյուր կառույց զբաղվի Հայաստանի Հանրապետությունում գոնե մեկ ներդրում բերելու համար,
- ԼՂՀ-ի խնդիրներով ավելի ակտիվ զբաղվել,
- Շարունակել և ընդլայնել մասնագիտական հանձնախմբերի գործունությունը:
- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման առումով,
- Սփյուռքահայ գործարարների կողմից ներդրումների իրականացում Հայաստանի Հանրապետությունում,
- Նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանի Հանրապետությունում» շարժմանը,
- Լեհաստանի իշխանությունների կողմից հայ համայնքի տրամադրվող ֆինանսական աջակցության ավելացում,
- Լեհական պատգամավորական պատվիրակության կողմից ԵՄ-ում ավելացնել լոբբինգը Հայաստանի Հանրապետությանը աջակցություն տրամադրելու նպատակով՝ Սիրիայից մեծ թվով փախստականներին տրամադրելու համար:

Մայիսի 7, 2017թ.

Նախարարը ժամանեց Վարշավա:

Մայիսի 7, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանի ուղեկցությամբ այցելել է Վարշավայի կենտրոնում գտնվող Թագավորական ամրոց-թանգարան, որտեղ մշտական ցուցադրության է ներկայացված «Թերեզա Սահակյան» հիմնադրամին պատկանող գորգերի բացառիկ հավաքածուն: Նախարար Հ.Հակոբյանը ծանոթացել է հայազգի նշանավոր ընտանիքի բացառիկ հավաքածուի ցուցանմուշների հետ, որի առանձին բաժին են կազմում Արցախի յուրահատուկ հայկական գորգերը:
- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանն այցելել է Վարշավայի կենտրոնում գտնվող Մարշալ Յուզեֆ Պիլսուցկու հրապարակ, որտեղ գտնվում է Վարշավայի կայազորի կենտրոնական գրասենյակը, որի պատին փակցված է հուշատախտակ՝ նվիրված Լեհաստանի Անհայտ Զինվորի խորհրդանշական Մայր հանդիսացող ազգությամբ հայ Յադվիգա Զառուգևիչովային:
- Նույն օրը դեսպան Է.Ղազարյանի հետ նախարար Հ.Հակոբյանն այցելել է նաև Վարշավայի Զինվորական Պանթեոն և հարգանքի տուրք մատուցել Յադվիգա Զառուգևիչովայի հիշատակին՝ ծաղիկներ դնելով հայազգի նշանավոր և խորհրդանշական գործչի հայկական տուֆակերտ Խաչքարով գերեզմանին:

Մայիսի 8, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել Լեհաստանի սենատի նախագահ Ստանիսլավ Կարչևսկու հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը, Լեհաստանի Սենատի աշխատակազմի պատասխանատու պաշտոնյաներ: Ողջունելով ՀՀ սփյուռքի նախարարին՝ ԼՀ Սենատի նախագահը նշել է, որ Լեհաստանի իշխանությունները չափազանց մեծ կարևորություն են տալիս արտերկրում ապրող լեհերի (Պոլոնիայի) հետ տարվող քաղաքականությանը, որի հարցում Լեհաստանի Սենատն ունի

շատ կարևոր դերակատարություն: Նա ներկայացրեց այն օրենսդրական կարգավորումներն ու քաղաքական ծրագրերը, որոնք Լեհաստանի իշխանություններն իրականացնում են Լեհաստանից դուրս ապրող հայրենակիցների հետ հարաբերություններում: Սենատի նախագահը նշել է, որ իրենց համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի մոտեցումները Սփյուռքի հետ տարվող աշխատանքներում, որոնց մի մասը կարող են օգտակար լինել նաև Լեհաստանի պարագայում: ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն է հայտնել ԼՀ սենատի նախագահին ջերմ ընդունելության և հանդիպման հնարավորության համար: Նախարարն իր խոսքում ընդգծել է, որ հայկական սփյուռքը չափազանց կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար, իսկ Լեհաստանի հայ համայնքն առանձնանում է իր յուրահատուկ և բազմաբովանդակ պատմությամբ: Նախարարը հիշեցրել է, որ 2017 թվականի լրանում է Լեհաստանի Կազիմիր Երրորդ Մեծ թագավորի կողմից հայերին տրված հատուկ արտոնության 650-ամյակը, որը խոսում է ոչ միայն Լեհաստանի հայ համայնքի հարուստ պատմության, այլև Լեհաստանի կյանքում հայերի ունեցած բացառիկ դերակատարության մասին: Նախարարը շնորհակալություն է հայտնել Լեհաստանի իշխանություններին մեր հայրենակիցների հանդեպ մշտական հոգատար վերաբերմունքի և բարեկամական հարաբերությունների համար, որը կրում է երկկողմանի բնույթ և արտահայտվում է նաև Հայաստանում ապրող ոչ մեծաթիվ լեհական համայնքի և առհասարկ լեհ ժողովրդի հանդեպ հայերի ունեցած մշտական եղբայրական զգացողություններով և վերաբերմունքով: Զրույցի ընթացքում նախարար Հ. Հակոբյանը առաջարկել է Սենատի նախագահին, որպեսզի Լեհաստանը՝ որպես ԵՄ անդամ երկիր, քննարկի Եվրամիության կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության ավելացման հարցը, քանի որ Հայաստանը Եվրոպայում Սիրիայից փախստականներ ընդունող հիմնական երկրների շարքին է դասվում: Հանդիպման վերջում նախարարը ներկայացրել է հայկական սփյուռքի առանձնահատկությունները և ՀՀ իշխանությունների, մասնավորապես ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող քաղաքականության հիմնական ուղղությունները:

- Այնուհետև ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել Լեհաստանի Հանրապետության ներքին գործերի և վարչարարության փոխնախարար Սեբաստիան Խվալեկի հետ, ով ի պաշտոնե զբաղվում է նաև ազգային փոքրամասնություններ հարցերով:

Հանդիպմանը մասնակցում էին նաև Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը, Լեհահայոց մշակութային ժառանգության հիմնադրամի նախագահ Յան Աբգարովիչը, Լեհաստանի Հանրապետության ներքին գործերի և վարչարարության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ: Ողջունելով ՀՀ սփյուռքի նախարարին՝ Ս. Խվալեկը նշել է, որ իրենց նախարարությունում իր պատասխանատվության տիրույթում է գտնվում ազգային և էթնիկ փոքրամասնություններին, այդ թվում հայ ազգային փոքրամասնությանը առնչվող հարցերը: Նա նշել է, որ հայերը Լեհաստանում օրենքով ճանաչված ազգային փոքրամասնություններից մեկն են, որոնք ունեն հին պատմություն՝ մշտապես ընդգծված դերակատարություն ունենալով Լեհաստանի կյանքում: Նա նշել է, որ Լեհաստանի կառավարությունը պատրաստակամ է շարունակական աջակցություն ցուցաբերել Լեհաստանում գործող հայ համայնքի՝ իրենց կարողությունների ամրապնդման և ազգային ինքնության պահպանման նախաձեռնություններում: ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել հանդիպման համար՝ ընդգծելով, որ Հայաստանը մեծ կարևորություն է տալիս հայկական Սփյուռքին ամբողջ աշխարհում և Հայաստանի համար չափազանց գնահատելի են բարեկամ երկրների իշխանությունների աջակցությունն ու հոգատարությունը, որը ցուցաբերվում է մեր հայրենակիցների հանդեպ: Նախարար Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն է հայտնել Լեհաստանի կառավարությանը հայկական կազմակերպություններին ցուցաբերվող մշտական, պարբերական և նշանակալի աջակցության համար, ինչի արդյունքում նրանք կարողանում են իրականացնել բազմաթիվ հայապահպանության ծրագրեր, պահպանել հայկական դպրոցներ, հրատարակել թերթեր և պարբերականներ, կազմակերպել տարաբնույթ մշակութային միջոցառումներ: Նախարարը գոհունակություն է հայտնել նաև այն փաստից, որ հայերը, իբրև ազգային փոքրամասնություն, մշտական ներկայացուցիչ ունեն ԼՀ կառավարության Ազգային ու էթնիկական փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում, որի միջոցով կարող են իրենց հուզող ցանկացած խնդիր բարձրացնել լեհական իշխանությունների առջև: Նախարար Հ. Հակոբյանը Սեբաստիան Խվալեկին առաջարկել է նաև քննարկել հայ համայքնին տրամադրվող աջակցության չափը ավելացնելու հարցը, քանի որ համայնքը նշում է իր ստեղծման 650-ամյակը, իսկ հաջորդ տարի

նշելու է Հայաստանի 1-ին Հանրապետության, ինչպես նաև Լեհաստանի անկախության 100-ամյակները: Նախարարը լեհ գործընկերներին ներկայացրել է նաև հայկական Սփյուռքի հետ տարվող աշխատանքները, հայկական սփյուռքի պատմությունն ու առանձնահատկությունները: Զրուցակիցներն անդրադարձել են նաև հայ-լեհական համագործակցության այլ հարցերի:

- Նույն օրը Վարշավայի Գյուղատնտեսության ազգային գրադարանի մեծ դահլիճում տեղի է ունեցել Լեհաստանի հայերի երկրորդ համաժողովը, որի կազմակերպիչներն էին ՀՀ սփյուռքի նախարարությունը և Լեհաստանում ՀՀ դեսպանությունը: Համաժողովը մեկնարկել է Լեհաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական օրհներգներով: Համաժողովին իր ուղերձն էր հղել Լեհաստանի Սեյմի նախագահ Մարեկ Կուխչինսկին: Համաժողովին ներկա էր ԼՀ Սենատի անդամ Յան Մարիա Յակովսկին, ով փոխանցել է ԼՀ Սենատի նախագահ Ստանիսլավ Կարչևսկու ողջույնները համաժողովի մասնակիցներին: Համաժողովի բացման պաշտոնական արարողության ժամանակ ողջույնի ելույթներով հանդես են եկել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը և ԼՀ կառավարության Ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցիչ Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը: Այնուհետև համաժողովի ընթացքում տեղի ունեցան թեմատիկ քննարկումներ: Լեհաստանի հայ համայնքի կազմակերպման և համայնքային կյանքին վերաբերող թեմատիկ քննարկումը վարում էր Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը, իսկ բանախոսներն էին Լեհահայոց մշակութային ժառանգության հիմնադրամի նախագահ Յան Աբգարովիչը, Հայ Կաթողիկե Եկեղեցու Վարշավայի և կենտրոնական Լեհաստանի հոգևոր հովիվ, Յուզեֆ Նաումովիչը, Գլիվիցեի Յուզեֆ Թեոդորովիչի անվան հայ համայնքի ներկայացուցիչ Բոգդան Կասպրովիչը և Լեհ-հայկական հիմնադրամի նախագահ Արսեն Հովսեփյանը: Համաժողովի ամփոփիչ քննարկման թեման հայապահպանության խնդիրներն էին, որը վարում էր Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը, իսկ հիմնական զեկուցողներն էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Լեհահայոց հոգևոր հովիվ Տաճատ Վարդապետ Ծատուրյանը և Կրակովի հայկական դպրոցի տնօրեն Գոհար Խաչատրյանը: Իր ելույթում նախարար Հրանուշ Հակոբյանը մանրամասն անդրադարձել է Սփյուռքի

հետ տարվող աշխատանքներում Հայաստանի որդեգրած քաղաքականությանը, ներկայացրեց հայկական սփյուռքի կառուցվածքը, հատուկ անդրադարձել է Լեհաստանի հայ համայնքին: Նախարարը ներկայացրել է համահայկական նշանակություն ունեցող խնդիրները, ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ծրագրերը, նոր սպասվող նախաձեռնությունները՝ կարևորելով Լեհաստանի հայկական կազմակերպությունների և հայ համայնքի ակտիվ մասնակցությունը: Համաժողովի ընդմիջումների և հյուրասիրության ընթացքում նախարար Հ. Հակոբյանն անհատակ հանդիպումներ է ունեցել Լեհաստանի հայ համայնքի ակտիվ գործիչների, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ծանոթանալով նրանց գործունեությանը և պատասխանելով նրանց հուզող հարցերին:

- Նախարարը մասնակցել է նաև Լեհաստանում կազմակերպված հայազգի գեղանկարիչ Գրիգոր Ասլանյանի նկարների ցուցահանդեսին:
- Իսպանիայում բնակվող հայազգի գործիչ Արարատ Ղուկասյանի «Փնտրտուքների ճանապարհին» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը, որը տեղի ունեցավ Վարշավայում, որին ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և Լեհաստանում ՀՀ դեսպան Էդգար Ղազարյանը:

Մայիսի 9, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը այցելել է Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հուշահամալիր, որտեղ ԵՏՄ երկրների դեսպանների հետ ծաղկեպսակ է դրել հուշարձանին:
- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանը այցելել է Լեհահայոց մշակութային ժառանգության հիմնադրամ, որտեղ պահվում են հայկական համայքնին վերաբերող 17-18-րդ դարերի մոտ 100 մշակութային գործեր և հայկական ձեռագրեր: Հիմնադրամում նախարարին ներկայացրել են տարվող աշխատանքները: Նախարարն առաջարկել է այդ մշակութային ժառանգությունը Հայաստանից մասնագետների ուժերով գնահատել, շարունակել թվայնացման աշխատանքները:
- Նույն օրը նախարարն այցելել է Լեհ-հայկական հիմնադրամ, որտեղ հանդիպել է հիմնադրամի նախագահ Արսեն Հովսեփյանի և աշխատակիցների հետ: Հանդիպման ընթացքում նախարարն առաջարկել

է հիմնադրամի հովանու ներքո գործող Վարշավայի կիրակնօրյա հայկական դպրոցը ընդլայնել, ընդհանրապես դպրոց հասկացությունը փոխարինել «Մաշտոց» կենտրոնով, քանի որ աշակերտներն այնտեղ տառաճանաչությամբ են զբաղվում: Արսեն Հովսեփյանը նախարարին է ներկայացրել հիմնադրամի աշխատանքները և ձեռքբերումները, ինչպես նաև խնդիրները: Մասնավորապես նշվել է, որ հիմնադրամը ուսուցիչների վերապատրաստման համար ուսումնամեթոդական ձեռնարկների կարիք ունի: Այդ կապակցությամբ նախարարությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ աշխատանքներ է տանում՝ ուսուցիչներին օգնելու համար:

- Այնուհետև նախարարը այցելել է «Ջուլիայի սկյուռիկներ» բարեգործական կազմակերպություն, որտեղ հանդիպել է կազմակերպության ղեկավար Ջուլիետա Գևորգովայի և աշխատակազմի հետ: Նախարարին են ներկայացրել կազմակերպության կողմից տարվող աշխատանքները: Ջուլիետա Գևորգովան նշել է, որ իր ղեկավարած ատամնաբուժական կենտրոնում աշխատող հայ և լեհ մասնագետները 3 ամսիը մեկ անգամ գնում են Հայաստան և անվճար բուժօգնություն են տրամադրում Մարի Իզմիրլյանի անվան մասնագիտացված մանկատան երեխաներին: Նա նշեց նաև, որ այժմ հայ-լեհական բիզնես կապերի ընդլայնման և ամրապնդման նպատակով աշխատանքներ են տարվում լեհ գործատուների ֆեդերացիայի պատվիրակության այցը Հայաստան կազմակերպելու ուղղությամբ: Նախարարը ողջունել է այդ նախաձեռնությունը և նշել որ նախարարությունը կազմակերպաչական բոլոր հարցերով կաջակցի կազմակերպությանը:

Մայիսի 9, 2017թ.

Ուշ երեկոյան նախարարը վերադարձել է Երևան:

8. **Գործուղվողը՝**
   Հրանուշ Հակոբյան

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**
   12. 05. 2017թ.